ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՅՈՒԹԵՐ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29

ՀՀ Արմավիրի մարզպետի 2021 թվականի օգոստոսի 13-ի ՆՄՈ/354-2021 որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<29>> հոկտեմբերի 2021թ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 96-րդ և 98-րդ հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզպետի 2021 թվականի օգոստոսի 13-ի ՆՄՈ/354-2021 որոշումը՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատանքային խումբը կազմով՝ աշխատանքային խմբի ղեկավար՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Գ. Գևորգյանի, աշխատանքային խմբի անդամներ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբան Լ. Հարությունյանի, ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր ճարտարագետ-շինարար Գ. Հովհաննիսյանի, ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Պողոսյանի, ՀՀ Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ Ց. Սարգսյանի և ՀՀ Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին–մարզային հողային պետական տեսչության ավագ մասնագետ Ս. Սարգսյանի կողմից 2021 թվականի հոկտեմբերի 14-ից 27-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ, ՀՀ Արմավիրի մարզի Գայ համայնքում իրականացվեց իրավական հսկողություն՝ տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ:

1. Իրավական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ կից հավելվածով (Իրավական հսկողության հարցաշար) ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. ՀՀ Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի կողմից իրավական հսկողության արդյունքների, իրավական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չեն եղել:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Արմավիրի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Գայ համայնքի ղեկավարի պաշտոնակատարին:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ, աշխատանքային խմբի ղեկավար՝ Գ. Գևորգյան

Աշխատանքային խմբի անդամներ՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբան՝ Լ. Հարությունյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր ճարտարագետ-շինարար՝ Գ. Հովհաննիսյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Պողոսյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ՝ Յ. Սարգսյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության ավագ մասնագետ՝ Ս. Սարգսյան

ՀՀ Արմավիրի մարզի
Գայ համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ **Ա. Նավասարդյան**

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՑ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ուսումնասիրության ժամանակահատվածը՝ 2018-ից 2021 թվականը)

1. Փատաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2021 թվականի մայիսի 6-ին Գայի համայնքապետարանի և <<Էջմիածին ՀՀԳ>> ՍՊԸ-ի միջև կնքվել է ՆՀՀ ԱՄ-ԳՀ-ՄԱԱՊՁԲ-21/10 գնման պայամանգիրը, որի արդյունքում մայիսի 12-ին Գայի համայնքապետարանը <<Էջմիածին ՀՀԳ>> ՍՊԸ-ի հետ կազմել է պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման թիվ 1 արձանագրությունը, համաձայն որի՝ նշված ՍՊԸ-ի կողմից, որպես ապրանքը հանձնող Գայանե Թադևոսյանը, որպես ապրանքն ընդունող Գայ համայնքի ղեկավար Սեյրան Մարկոսյանին է հանձնել կլոր կնիք Գայի համայնքապետարանի տվյալներով և կնիքի համար բարձիկ՝ հարմարեցված կնիքի պատյանի մեջ, ընդհանուր 15000 ՀՀ դրամ արժողությամբ:
Նշված գործով առկա են պայամանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ N1 եզրակացությունը, պայամանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ N1 ակտը և արտադրանքների, ապրանքների առաքման հաշիվ վավերագիրը:
Այդ առումով փաստվում է, որ ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 4-ի N1445-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ պետական են համարվում այն կնիքները, որոնք ունեն Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկեր և նշված կառավարության որոշմամբ հաստատված կարգով նախատեսված վավերապայմաններ, իսկ ՀՀ կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 27-ի N1119-Ն որոշման համաձայն՝ պետական կնիքների, դրոշմակնիքների պատրաստման կամ արտադրության լիցենզիա տրվել է <<Տեխնիկա Պլյուս>> ՓԲԸ-ին: Մինչդեռ՝ ներկայացված գործընթացի արդյունքում Գայի նախկին համայնքապետ Ս. Մարկոսյանը <<Էջմիածին ՀՀԳ>> ՍՊԸ-ից ձեռք է բերել համայնքապետարանի անվամբ կլոր կնիք:
Ս. Մարկոսյանի լիազորությունները լրանալու հիմքով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին մասով սահմանված կարգով, Արա Ռոբերտի Նավասարդյանը ՀՀ Արմավիրի մարզպետի 2021 թվականի սեպտեմբերի 16-ի ՆՄՈ/392-2021 որոշմամբ նշանակվել է Գայ համայնքի ղեկավարի պաշտոնակատար, ում կողմից էլ ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 4-ի N1445-Ն որոշմամբ սահմանված կարգով, կնիքի մաշվածության պատճառով, պատվիրվել և <<Տեխնիկա Պլյուս>> ՓԲԸ-ի կողմից ստացվել է Գայի համայնքապետարանի անվամբ կլոր կնիք, որն էլ օգտագործվում է որպես համայնքի անվամբ կնիք: